ՀՐԱՎԵՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

2020 թվականի փետրվարի 28-ին ժամը 14^{00}-ին և 16^{-00}-ին Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում (Վարդանանց հր. 1, 2-րդ հարկ, ավագանու նիստերի դահլիճ) կայանալու է հանրային բաց լսումներ և քննարկումներ (այսուհետ՝ քննարկում):

Քննարկման հարցերը՝

1. **«Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Գյումրի համայնքի կողմից ներկայացվող 2020 թվականին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ»:**
   (զեկուցումը՝ ժամը 14^{00}-ին)

Ծրագիր 1 «Գյումրի քաղաքի երկրորդական 17 փողոցների հիմնանորոգում»

(Զեկուցող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ. Մանասյան)

Ծրագիր 2 «Սանմաքրման տեխնիկասարքավորումների և ավտոբուսների ձեռքբերում»

(Զեկուցող՝ «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժ/պ Վ.Սամսոնյան),

Ծրագիր 3 «Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակի շատրվանի արդիականացում, այգիներում, պուրակներում նստարանների պատրաստում ու տեղադրում և հասարակական զուգարանների կառուցում»

(Զեկուցող՝ «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժ/պ Վ.Սամսոնյան,

հարակից զեկուցող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ. Մանասյան)

Ծրագիր 4 «Գյումրու բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության արդիականացում»,

(Զեկուցող՝ Գյումրի համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Կ. Մխչյան)

Ծրագիր 5 «Գյումրի համայնքում խելացի հանրային երիտասարդական զբոսայգու հիմնում»

(Զեկուցող՝ Գյումրի համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Կ. Մխչյան):

2. **«Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրին մասնակցելու վերաբերյալ»: (զեկուցումը՝ ժամը 16^{00}-ին)**

Զեկուցող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետի ժ/պ Շ.Ալեքսանյան:

Քննարկմանը մասնակցելու ցանկություն ունեցող շահագրգիռ անձիք (ֆիզիկական, իրավաբանական) իրենց առարկություններն ու առաջարկությունները գրավոր տեսքով կարող են ուղարկել Գյումրու համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ gyumri@gyumri.am կամ հանձնել հանրային քննարկման քարտուղարին սույն հրավերի հրապարակման պահից սկսած 10 օրվա ընթացքում, անկախ քննարկմանը ներկա գտնվելու հանգամանքից:

Քննարկման մասնակիցները իրենց առարկություններն ու առաջարկությունները գրավոր տեսքով կարող են ներկայացնել քննարկման քարտուղարին նաև հանրային քննարկման ավարտից հետո 5 օրվա ընթացքում:

Սույն հրավերին կցվում են սուբվենցիոն ծրագրային հայտերը:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ